

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթով
 Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն
 պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների
 ձեռքբերման գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 06.07.2018թ. ժամը 15.00-ին

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ/

Գ. Խաչատրյանը

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ/

Լ. Ոսկանյանը

ԳՊ/ԲԱ/

Հ. Հարությունյանը

Ս. Պետրոսյանը

Ս. Դավթյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀմ

Ս. Նիկոլյանը

1. Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների /Աշխատանք/ ձեռքբերման նպատակով ս.թ. հունիսի 20-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով բաց մրցույթ /Մրցույթ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով ՀՀՌՑ-ի վարչական շենքում, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեում, հուլիսի 6-ին, ժամը 15.00-ին: Նիստին ներկա են գտնվել լրատվամիջոցներ, այդ թվում՝ Շանթ, Կենտրոն, ԱԲ և այլ հեռուստաընկերությունները:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները, տվյալները

N	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Պրոթերմ ՍՊԸ	emilchatinyan@gmail.com	02253748
2	ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ	info@denergy.am	00114704
3	Մոնտաժտրանսշին ՍՊԸ	montagetransshin@mail.ru	02266448

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Պրոթերմ և Մոնտաժտրանսշին ՍՊԸ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում առկա են «ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19» ծածկագրով հրավերով (Հրավեր) պահանջվող փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

3.2 ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ հայտում բացակայում է Հրավերի 7-րդ կետով սահմանված հայտի ապահովումը, որը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	Հայտի ապահովում՝ Բանկային երաշխիք /Բ/ կամ կանխիկ փող /Կ/	1 չափաբաժին		
			արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար
1	Պրոթերմ ՍՊԸ	/Կ/ 3 500 000	56 800 000	11 360 000	68 160 000
2	ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ ՍՊԸ	-	54 000 000	10 800 000	64 800 000
3	Մոնտաժտրանսշին ՍՊԸ	/Բ/4 000 000	57 735 144	11 547 029	69 282 173

Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերում

Նախահաշվային գին՝ 83 990 314 ՀՀ դրամ, ներ. ԱԱՀ

